

«ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ «ՀԱՅ» ՏԵՍԱԿԻ
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՍՄԱՐ

ԱՌԱՐԿԱ - ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ - ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - ՍԵՎԱՆԻ N4 Հ/Դ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----	3
ԳԼՈՒԽ 1.-----	5
ԳԼՈՒԽ 2.-----	9
ԳԼՈՒԽ 3.-----	12
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ -----	16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ-----	18

Այսօր հաճախ կարելի է լսել, որ պետք է կառուցենք մեր պետությունը այս կամ այն պետության պես, որդեգրենք այս կամ այն ամբիշները՝ հաճախ բավարար չափով չճանաչելով ինքներս մեզ և մեր արժեքները: Գուցե հեշտ է հրաժարվել մի բանից, որը չես ճանաչում, ինչը չի կարելի ասել՝ երբ ինքդ կրողն ես այդ ամենի: Արժեքը մեզ շրջապատող աշխարհի ընկալումն է, այն ձևավորվում է մեր ունեցած գիտելիքի, ինֆորմացիայի, մեր սեփական փորձի հիման վրա իսկ ազգային արժեքը՝ ազգի պատմությունն է, նրա անցած դարավոր ուղին: Մարդկության պատմության արշալույսից մինչև մեր օրերը գոյություն ունի հայը: Եթե հաշվի առնենք այն ծանր փորձությունները, որոնք վիճակվել են հային ու Հայաստանին, իրոք զարմանալ կարելի է, որ հայը գոյատևել է հազարամյակներ շարունակ և չի անհետացել կամ լիովին չի ձուլվել այլ ազգերի, անցել է ծանր փորձությունների միջով, գոյատևել է և կա: Հայերի հարևանությամբ հայտնված եկվորներին երբեմն հաջողվել է սրի, խաբեության, խարդավանքի, դիվանագիտական ու ռազմական ճանապարհով տեր դառնալ հայկական տարածքներին ու Հայաստան աշխարհին: Հայ ժողովուրդը դիմացել է դարերի փորձությանը և չի անհետացել ինչպես իր հնագույն հարևաններ՝ Շումերը, Աքադը, Էլամը, Բաբելոնը, Ասորեստանը և այլ պետություններ: Երկրի մի անկյունից դուրս մղված հայը ապաստանում էր իր երկրի մեկ այլ անկյունում. հայը, որպես հայ էթնոսի ներկայացուցիչ, պահպանում էր ազգային նկարագիրը: Ազգը կենդանի օրգանիզմ է, որի գոյապահպանման համար անհրաժեշտ են հետևյալ ազգային արժեքները, գործոնները՝ գիրն ու լեզուն, մշակույթը, պատմական հիշողությունը, հոգեկերտվածքը, ազգասիրությունը, հայրենասիրությունը, ոգին, ընտանիքը, կրոնը, ավանդույթները և այլն: Կարելի է երկար թվել ազգին բնորոշ հատկանիշները և նկարագրերը, որոնք պայմանավորում են նրա՝ որպես առանձին օրգանիզմի ընկալումն ու տարբերակումն այլ ռեսակներից: Սակայն համեմատության մեջ պետք է հասկանանք, որ ինչպես ճարտարապետական շինություններն ունեն պատեր, բայց հիմնական ծանրությունն իրենց վրա կրում են սյուները, նույնպես և ազգ հասկացությունն ունի մի քանի առանցքային սյուներ, որոնք լ գերազանցապես ապահովում են հավաքական ամբողջի գիտակցությունը: Ընդ որում, դրանցից որևէ մեկն առանձին վերցրած գերադաս չէ մյուսի նկատմամբ, և ինչպես շինության պարագայում նրանք հանդես են գալիս համատեղ և համարժեք: Այս աշխատության մեջ լիտուսներ վերը նշված ազգային արժեքներից՝ Հայոց հայրենիքի, Հավատի, Լեզվի ու Գրի մասին: Հայրենիքին համահավասար փոխարժեքներ գոյություն չունեն: Հայրենիքը պատկանում է ողջ ժողովրդին՝ անցած դարերի բոլոր մեռածներից մինչև ապագայում ծնվելիք բոլոր երունդները: Հայրենիքի հարցում զիջումներ չեն լինում: Հայրենիքի կորուստը վաղեմություն

չունի: Այդ պատճառով էլ ժողովրդի ոչ մի սերունդ, ոչ մի գործիչ իրավունք չունի թեկուզ մի թիզ հող նվիրաբերելու, հանձնելու, զիջելու այլ ժողովուրդների կամ էլ հրաժարվելու կորցրած հայրենիքի տարածքներից: «Հայրենիքը պատահական հրաշք չէ, այլ անանց հրաշք, բնության ու պատմության հրաշք»,— գրում է Ժյուլ Միշլեն: Ազգը պահող կարևոր սյուներից է նաև հավատը. անհնար է գերազնահատել Հայ եկեղեցու պատմական դերն ու նշանակությունը Հայոց պատմության մեջ ընդհանրապես և Հայ կրթական գործին բերած նվիրապետությանը : Հայ եկեղեցին իր հոգևոր առաքելությունն իրականացնելիս դարեր շարունակ մասնակցել է նաև ազգային, մշակութային, իրավական, տնտեսական և քաղաքական կյանքին, իսկ պետականության բացակայության և օտար տիրապետության պայմաններում ստանձնել է նաև պետական գործառույթներ, ներկայացրել ազգը և պաշտպանել նրա շահերը գերիշխան երկրների իշխանությունների մոտ: Ինչպես գրում է Մաղաքիա պատրիարք Օրմանյանը. «Հայոց եկեղեցին եղած է այն միակ հոգակապը, որ Հայկա սերունդին ցրված մնացորդները կրցած է իրարմե անքակտելի պահել և իբրև մեկ ազգ պահպանել»:

«Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն» (Մուշեղ Իշխան, քանաստեղծ): Հայոց գրերը հայ ժողովրդի համար դառնել են գոյատևման, ազգային ինքնության, արժեհամակարգի պահպանման հզոր միջոց՝ բոլոր ժամանակներում: IV դարի վերջում մայրենի լեզվով գիր և գրականություն ունենալն ազգապահպան խնդիր էր դարձել, քանի որ հայերեն գրավոր լեզուն կենսական անհրաժեշտություն էր թե՛ պետության, թե՛ եկեղեցու և դրանով իսկ ներկա ու ապագա սերունդներին դաստիարակելու և կրթելու գործում: Հայ ազգային ինքնության պահպանումը, սերունդներին հայեցի կրթելու դաստիարակելու, պատմական ակունքներին հաղորդակից դարձնելու ձգտումը մշտապես եղել և մնում է մեր ժողովրդի ազգային հոգեկերտվածքի կարևորագույն բաղկացուցիչը: Ակնհայտ տեսնում ենք, որ Դարեր շարունակ ընթացող արժեհամակարգերի պատերազմում ուղղակի կոչնչացվել հայ ազգը, եթե չլինեին ազգը՝ ազգ պահող հենասյուները՝ Հայրենիքը, Լեզուն ու գիրը, Հավատքն ու մշակույթը, հոգեկերտվածքը, ազգասիրությունը, հայրենասիրությունը, ոգին, ընտանիքը և այլն:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Հայրենիքը պատմականորեն տվյալ ժողովրդին պատկանող բնատարածքն է, բնությամբ, բնակչությամբ, հասարակական ու պետական կառուցվածքով, լեզվով, մշակույթով, կենցաղով, բարքերով և այլն: Հոգևոր տեսակետից հայրենիքը այն բնատարածքն է, որը տվյալ էթնոսի կամ էթնիկ հանրույթի անհատներն ընկալում են որպես իրենց ազգային կամ էթնիկ ինքնության անբաժանելի մաս: Այս իմաստով՝ ազգը և հայրենիքը անբաժանելի ամբողջություն են: Կան ազգեր, որոնք ի սկզբանե ձևավորվել են մի որոշակի տարածքում՝ մշտապես մնալով նույն տեղում: Այդտեղ է անցել նրանց ամբողջ պատմական ուղին: Նման հին ու բնիկ ազգերից են նաև հայերը: Հայերն իրենց հայրենիքը կոչում են Հայք կամ Հայաստան: Հայոց աշխարհ, երկիր որտեղ հայ ժողովուրդը ձևավորվել ու անցել է պատմական զարգացման բոլոր փուլերը: Այն հայի ծննդավայրն է, բնօրրանը: Այն տարածքն է, որտեղ հայն ապրել է դարեր շարունակ, կերտել իր պատմությունը, ստեղծել մշակութային արժեքներ: Աշխարհագրական այն տարածքը ,որի հետ ի սկզբանե կապված է հայ ժողովուրդի հազարամյակների պատմությունը կոչվում է Հայկական լեռնաշխարհ: Այն բնության ստեղծագործություն է, աստվածային արարչագործություն. ասում են Աստվածաշնչում նկարագրված եղեմ-դրախտը հենց այստեղ է եղել: Այն համընկնում է մեր պատմական հայրենիքին, որտեղ կազմավորվել, զարգացել ու իր քաղաքական կյանքն է կերտել հայ ժողովուրդը: Անվանի ազգագրագետ Էնթոնի Սմիթի արտահայտությամբ՝ «Ժողովուրդը և հողը պատկանում են միմյանց, ամեն մի տարածք և հողակտոր դեռ հայրենիք չեն: Հայրենիքը՝ «պատմական» հող է, «բնօրրան»: Տարածքն ու Հայրենիքը դարերի ընթացքում ունենում են ներգործուն փոխազդեցություն: Հողը Հայրենիք է դառնում, երբ այն վերածվում է պատմական հուշերի ու պատկերների շտեմարանի, ուր ապրում են տվյալ ժողովրդի իմաստունները, ուր սրբերն ու հերոսները, լեռներն ու ձորերը սրբագործվում են: Այս ամենը հայրենիքը դարձնում են միակը և անկրկնելին»: Հայրենիքը սրբացվել է և ժողովրդի հիշողության մեջ ամրագրվել առասպելներով, լեգենդներով, հետաքրքիր պատմություններով: Հայրենի հողը պաշտպանելը դաձել է յուրաքանչյուր հայ մարդու սրբազան պարտքը: Նվիրվածությունն ու սերը առ հայրենիք արտահայտվում է ոչ միայն խոսքով, այլ՝ գործով: Հայրենիքի համար շատերն են հերոսական գործեր կատարել, հարկ եղած դեպքում՝ իրենց կյանքը զոհել: Գ.Նժդեհն ասել է՝ «Հայրենիքի համար ապրում և մեռնում է ոգու մարդը, միայն նմանը»: Հայրենիք կոչվող ապրելատարածքը պետք է լինի

ազատ և անկախ: Անկախ Հայրենին այն հզոր գործոնն է, որն ապահովում է ժողովրդի գոյապահպանումն ու զարգացումը: Առանց հայրենասիրության հայրենիք գոյություն ունենալ չի կարող՝ հայրենիքը պահել հնարավոր չէ: Հայրենիքը ժողովրդի բոլոր սերունդների դարավոր, հերոսական պայքարի արդյունքն է: Առանց անձնագոհության, առանց արյունի, ոչ մի ժողովուրդ հայրենիք չի կարող ունենալ: Հայրենիքի համար զոհվելը հերոսություն է: Հերոսների արյունով ներծծված մայրենի հողը քաջերի նոր սերունդներ է կյանքի կոչում: Առանց հայրենիքի ազգ չկա: Ժողովուրդների գոյապահպանման հիմնական պայմանը անկախ Հայրենիքի առկայությունն է: Բոլոր ժողովուրդներն էլ ազատագրական պայքարի դժվարին ճանապարհ են անցնում, մեծամեծ զոհեր են տալիս՝ ազատ,անկախ Հայրենիք ունենալու համար: Ահա՛ թե ինչու բոլոր ժողովուրդների ազգային գաղափարախոսությունների հիմքում, ի թիվս ազգի գաղափարի, նաև ամբողջական հայրենիքի գաղափարն է:

Հազարամյակների փորձությանը հայ ազգը առաջին հերթին դիմացել է իր ընդարձակ երկրի ու տարածքների շնորհիվ: Հայաստանը ընդարձակ երկիր էր, երբ թշնամին գրավել է երկրի մի մասը, ապա ժողովուրդը նահանջել, սեղմվել է իր տարածքում: Մա կրկնվել է Բազմիցս, և հայ ժողովուրդը անընդհատ կորցրել է իր երկրի, իր հայրենիքի ինչ-որ մասը: Ժամանակի ընթացքում կորուստը մեծացել է, նկատելի դարձել և այժմ՝ 21-րդ դարում ունենք այսօրվա վիճակը, փոքր Հայաստան երկիր, Արցախ, հայաբնակ Ջավախք ու հայաթափված բազմաթիվ տարածքներ: Այդ տարածքների ազատագրման համար պայքարը կոչվել է ազգային-ազատագրական պայքար: Մեր հայրենիքի բռնագրավված տարածքների ազատագրումը՝ հայրենատիրումը, համազգային պարտականություն է: Ահա թե ինչու հայերի ազգային գաղափարախոսությունը պատմականորեն ստացել է Հայկական հարց, Հայ դատ, Պահանջատիրություն անվանումները, որը նշանակում է կորցրած հայրենիքի ազատագրում: Ժողովուրդը ղեկավարվում է «Հայրենիքի հրամայականով»: «Հայրենիքը» ամբողջական պատմական հասկացություն է դավանանք է: Այսպիսին է եղել պատմության տրամաբանությունը և ստեղծված պատմական իրավիճակում հայ ժողովուրդն այլընտրանք չի ունեցել Հայ ժողովրդի համար իսկական աղետ են դարձել Թուրքական ցեղերը, գրավելով Հայկական լեռնաշխարհը, հենց սկզբից պայքար են սկսում Հայոց Հայրենիքը սեփականացնելու, այնտեղ թուրքական պետություն ստեղծելու համար: Ընդ որում, այդ նոր հայրենիքը ցանկանում էին ունենալ առանց այդ երկրի իսկական տերերի: Հայ ժողովուրդը կամ պետք է ձուլվեր, կամ արտագաղթեր, կամ էլ ֆիզիկապես ոչնչացվեր: Հայերի ձուլումը, մահմեդականացումը և արտագաղթը Օսմանյան կայսրությունում դարեր շարունակ

կազմակերպված բնույթ են կրել: Եթե Թուրքիան նվաճում և սեփականացնում էր այլ ժողովուրդների հայրենիքները, իսկ բնակչությանը ֆիզիկապես ոչնչացնում: Ռուսաստանը, ընդհակառակը վարում էր ավանդական գաղութային քաղաքականություն՝ իր բոլոր բացասական հետևանքներով: Ահա՛ թե ինչու ռուսական տիրապետությունը հայոց պատմագրության մեջ բնութագրվում է որպես «չարյաց փոքրագույնը»: Գոյություն է ունեցել նաև քրդական գործոնը, եթե հայերի կոտորածներն ու ցեղասպանությունը ծրագրում էին թուրքերը, ապա դրանք իրականացնում էին հիմնականում քրդերը: Ինչ-որ չափով թուրքական գործոնի բաղկացուցիչ մասն է նաև ադրբեջանական գործոնը: Ադրբեջանական ազգ գոյություն չունի: Ադրբեջանցիները թուրքեր են, օղուզ թուրքմենական ցեղից: Ադրբեջանը ևս ձեռնամուխ եղավ հայկական կոտորածների կազմակերպմանը Սումգայիթում, Բաքվում և Ադրբեջանի այլ վայրերում: Հայ ժողովրդին ոչնչացնելու այդ քաղաքականությունը շարունակվում է մինչ օրս: Առանց ազգի հայրենիք չկա, առանց հայրենիքի՝ ազգ: Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ձեռք է բերել իր ինքնությունը, ազգային դիմագիծը: Ժողովուրդը պետք է նույնանա իր հայրենիքի հետ: Անկախ հայրենիքը և պետականությունը պետք է լինեն յուրաքանչյուր հայի բարձրագույն գաղափարը: Հայը Հայրենիքից կտրվելը պետք է համարի ողբերգություն: Ապրում և գոյատևում են այն ժողովուրդները, որոնք անձնագոհաբար պայքարում են իրենց հայրենիքի անկախության համար: Կռվելով՝ ժողովուրդը հայրենիք է պահում, փախչելով՝ կյանքն է պահպանում, բայց կորցնում է հայրենիքը, որը դնում է իր և իր ժառանգների՝ որպես հայի, կործանման սկիզբը: Հայրենիքը հավերժ ազգային-պատմական կատեգորիա է: Սերունդների պայքարով է ապահովվում ազգի և հայրենիքի հավերժությունը: Հայրենասիրության մարումն անխուսափելիորեն հանգեցնում է հայրենիքի և ազգի ոչնչացմանը: Հայրենիքն առանց արյան և գոհաբերության չի պահվում: Հայրենիքը դարերի ընթացքում ժողովրդի թափած արյամբ է սրբագործվում, հողը հերոսների արյունով է դառնում հայրենիք: Ժողովուրդը և պետությունը մշտապես պետք է բարձր մակարդակով վարեն ազգի և հայրենիքի գաղափարների քարոզչությունը, մշտապես թարմ պահեն ժողովրդի պատմական հիշողությունը: Ազգի և հայրենիքի գաղափարների քարոզչության գործում խոշոր դեր կարող են խաղալ Գարեգին Նժդեհի գաղափարները. «Իբրև հասկացողություն՝ Հայրենիքն ընդգրկում է ոչ միայն անցյալն ու ներկան, այլև գալիքը: Դա ժողովրդի պատմական առաքելությունն է ըստ իր վախճանական նպատակի. զարգացող մի հավերժություն է Հայրենիքը: Դա եկող ու անցյալ սերունդների անմահությունն է, որն իբրև գաղափար և գործ ժողովուրդը դրոշմում է նյութի վրա, խոսքի մեջ և այն ապրեցնում իբրև անմեռ հուշ, իբրև պատմություն»: «Հայրենիքը չի

տրվում այնպես, ինչպես ժառանգվում է հայրենական հարստությունը. դա ձեռք է բերվում
ամեն մի սերունդի և նրա առանձին անդամի կողմից, ձեռք է բերվում հայրենաճանաչումով,
հայրենապաշտությամբ, նրան արժանի դառնալու ձգտումով: Կարելի է հայրենիքում լինել
բայց հայրենիքից չլինել, կարելի է հայրենիքում ապրել, բայց և այնպես հոգեհաղորդ չլինել
նրան: Կարելի է, վերջապես, իրավապես հայրենատեր լինել, իսկ հոգեպես՝ անհայրենիք:
Արժանի չես Հայրենիքիդ, եթե այն չես դավանում իբրև գերագույն նպատակ, իսկ անձդ՝ իբրև
միջոց»: Այնուամենայնիվ, պետք է փաստենք, որ ի փառս մեր ազգի հազարամյակների վեր
մեզ հաջողվում է լինել աշխարհի քաղաքական քարտեզի վրա մեր Հայրենիքի՝ Ավետյաց
Երկրի տերը...

Մեծ Հայք

A stylized map of Armenia, outlined in a thick, dark blue border. The map is filled with a grid of lines and various colors representing terrain and administrative regions. A large, irregularly shaped blue area is located in the upper right quadrant, representing Lake Sevan. The text 'Մեծ Հայք' is written in a large, black, serif font across the center of the map.


ՀԱՅՈՑ ՀԱՎԱՏԸ

Հավատը հույս է ձևում և մղում մարդուն ապրելու, ստեղծելու արարելու: Մարդը քանի դեռ ապրում է հավատում է, և քանի դեռ հավատում է շարունակում է ապրել: Դարեր շարունակ հավատը և ազգությունը նույնացած են եղել մեր ժողովրդի համար, Հայության ու քրիստոնեության իրար միաձուլումը մեր ժողովուրդը և օտարները լավագույնս արտահայտել են այդ երկու բառերի իրար միահյուսումից՝ «հայ քրիստոնյա», և այս երկուսի ներդաշնակ միությունն է մեր ազգային ինքնության՝ դարերի փորձառությամբ անցած լավագույն արտահայտությունը: Հայության կյանքում այս նույնացումը կատարել են նաև օտարները, որի խոստուն արտահայտությունն է այն փաստը, որ մեր պատմագրության մեջ մեկ օրինակ իսկ չի հիշատակվում, որ որևէ մեկ հայից կամ հայ ժողովրդի մեկ հատվածից պահանջվեր ուրանալ ազգությունը: Միակ պահանջը եղել է հավատը և եկեղեցին ուրանալը, որով, ինքնըստիներքյան, կորսվել են և լեզուն, և ազգությունը: Նույն այս պատճառով է, որ լեզուն կորցրած հայերը եկեղեցու միջոցով պահել են ազգությունը, իսկ եկեղեցուց հեռացած և ոչ միայն, կարճ ժամանակում ձուլվել են ուրիշ ազգերի հետ՝ կորցնելով իրենց ազգային ինքնությունը: Ինչպես գրում է Մաղաքիա պատրիարք Օրմանյանը. «Հայոց եկեղեցին եղած է այն միակ հողակապը, որ Հայկա սերունդի ցրված մնացորդները կրցած է իրարմե անքակտելի պահել և իբրև մեկ ազգ պահպանել»: Անցնող ավելի քան 1700 տարիների ընթացքում քրիստոնեությունը մեր կյանքում իր շողերը սփռել է Հայոց եկեղեցու միջոցով, իր դրոշմն է դրել ոչ միայն մեր գրականության, հայկական ճարտարապետության՝ զարդանախշերից մինչև տարբեր կառույցների ընդհանուր հորինվածքի և ընդհանրապես՝ ողջ դպրության, արվեստի ու մշակույթի վրա, այլև մեծապես իրենով է պայմանավորել մեր ժողովրդի ողջ հոգեկերտվածքը՝ ընտանեկան հարաբերություններից, կենցաղի բարոյական արժեհամակարգից մինչև աշխարհայացքային ամենաբարդ և նրբին հարցերը: Հայ եկեղեցին իր հոգևոր առաքելությունն իրականացնելիս դարեր շարունակ մասնակցել է նաև ազգային, մշակութային, իրավական, տնտեսական և քաղաքական կյանքին, իսկ պետականության բացակայության և օտար տիրապետության պայմաններում ստանձնել է նաև պետական գործառույթներ, ներկայացրել ազգը և պաշտպանել նրա շահերը գերիշխան երկրների իշխանությունների մոտ: Անհնար է գերազնահատել Հայ եկեղեցու պատմական դերն ու նշանակությունը՝ Հայոց պատմության մեջ ընդհանրապես, և Հայ կրթական գործին բերած

նվիրապետությանը: Հայը ուր գնացել է, իր համայնքային կյանքի կազմակերպումն սկսել է դպրոցի և եկեղեցու հիմնամամբ՝ որպես երկու հիմնասյուներ մեր ազգային կյանքի: Եվ նույն այս պատճառով է, որ հայոց եկեղեցական կառույցն է մնում ազգային ինքնության և հայապահպանության գլխավոր գործոնը Սփյուռքում, իր շուրջը համախմբելով կուսակցություններին, հասարակական, բարեսիրական մշակութային կազմակերպություններին, քանի որ նրանցից յուրաքանչյուրն առանձնաբար չի կարող կատարել համախմբող այն դերը, որը վերապահված է մեր եկեղեցուն և հոգևորականությանը: Հայոց Եկեղեցու հիմքը, ըստ ավանդության, դրել են Հիսուս Քրիստոսի առաքյալները՝ Թադեոսը և Բարդուղիմեոսը: Այդ ավանդության համաձայն՝ նրանք քարոզել են Քրիստոսի Ավետարանը Հայաստանում և նահատակվել այստեղ՝ իրենց արդար արյունով ոռոգելով մանանեխի այն հատիկները, որ իրենց վարդապետի պատվերով սերմանել էին բարեբեր հողում: Ժամանակի ընթացքում նրանց ցանած սերմերն աճեցին ու զորացան՝ կազմելով այն մեծ ծառը, որի հովանու ներքո պատսպարվեց ու հասակ առավ Հայոց Եկեղեցու շուրջը համախմբված հայ հավատացյալ ժողովուրդը: Սակայն ինչպես համարյա մյուս բոլոր եկեղեցիների, այնպես էլ Հայոց Եկեղեցու սկզբնավորության պատմությունն ավանդական գրույցների մշուշով է պատված, որոնցից ստույգ պատմական տեղեկություններ քաղելն անհնարին գործ է: Պատմական անհերքելի փաստն այն է միայն, որ այդ քարոզությունների շնորհիվ քրիստոնեությունը Հայաստանում հաստատուն արմատներ է ձգել և III դ. կեսերից մեր առաջ կանգնում է իբրև կազմակերպված եկեղեցական համայնքների մի միասնություն: Հայաստանյայց Առաքելական եկեղեցին պաշտոնապես հիմնադրվել է 301թ.-ին, Հայոց Տրդատ Գ թագավորի օրոք՝ Քրիստոնեությունը Մեծ Հայքի թագավորության պետական կրոն հռչակելով: Կենտրոնը՝ ՀՀ Վաղարշապատ քաղաքի Ս. Էջմիածնի վանքն է՝ Մայր աթոռ Ս. Էջմիածինը: Ուր էլ ապրելիս լինի հայ հավատացյալ մարդը, նա իրեն հոգեպես միշտ կապված է զգում Հայ Եկեղեցու և նրա կենտրոնի՝ Սբ. Էջմիածնի հետ, որտեղ գտնվում է Լուսավորչի աջը, որտեղից նա իբրև միության խորհրդանշան սուրբ մեռոնն է ստանում, և որտեղ նստում է այդ եկեղեցու Գերագույն պետը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Դարեր շարունակ, ապրելով այլադավան միջավայրում, այլակրոն ժողովուրդների մեջ, հայերն առավել ամուր են կապվել իրենց եկեղեցուն: Հենց եկեղեցու և հավատքի միջոցով են հայերը կարողացել օտար երկրերում պահպանել հոգևոր կյանքի, մշակույթի ավանդները, իրենց գիրն ու գրականությունը, ազգային առանձնահատկությունները: Մրանով է հենց պայմանավորված

այն փաստը, որ բոլոր գաղթօջախներում, բոլոր ժամանակներում հայերի առաջին գործը եղել է հայկական եկեղեցու կառուցումը, որին, որպես տրամաբանական շարունակություն, հաջորդել է դպրոցաշինությունը: Հայկական դպրոցներ բացելու և նրանց գործունեությունն անխափան տանելու գործի հիմնական նախաձեռնողն ու կազմակերպողը եղել է հայկական եկեղեցին: Դա է վկայում այն փաստը, որ բոլոր հայկական առաջին դպրոցները բացվել են եկեղեցիներին կից և նրանց հովանավորությամբ: Հայոց ցեղասպանությանը հաջորդած տարիներին, աշխարհափյուռ հայ գաղթօջախներում, Հայ եկեղեցին շարունակել է իր ազգային-հոգևոր առաքելությունը հայրենազրկված արևմտահայության համախմբման գործում: Վիթխարի դեր կատարելով սփյուռքահայության համայնքների կազմակերպման և զարգացման բոլոր փուլերում՝ Հայ եկեղեցին գաղթօջախներում հանդես է եկել որպես հայապահպանության, ազգային ինքնագիտակցության բարձրացման գլխավոր գործոն: Հայկական եկեղեցին Սփյուռքի գաղութներում, հիրավի, կատարել է պետության դեր՝ իր շուրջն է հավաքել տարագիր հայությանը և օգնել կազմակերպելու նրանց կյանքն օտարության մեջ: Հայոց Եկեղեցին ազգային, ժողովրդական և չնայելով ի սփյուռս աշխարհի ցրված լինելուն՝ միասնական եկեղեցի է: Ազգային է. դա նշանակում է, որ հայ հավատացյալ ժողովրդի համար ազգ և եկեղեցի հասկացությունները դարե քի վեր միացած են եղել իրար հետ, և հայ ազգը, որպես ամբողջություն, հավատարիմ է մնացել իր առաքելահիմն ու լուսավորչահաստատ եկեղեցուն: Որքան էլ այլ եկեղեցիները փորձել են պառակտում առաջացնել Հայոց ազգային եկեղեցու մեջ (բյուզանդացիներ, կաթոլիկներ, վերջերս նաև բողոքականներ), դա նրանց չի հաջողվել:

Վերջապես Հայոց Եկեղեցին միասնական եկեղեցի է. թեև նրա հավատացյալ հոտը ցրված է աշխարհով մեկ և ապրում է տարբեր վարչակարգ ունեցող տարբեր պետությունների սահմաններում, բայց այդ եկեղեցին բոլոր հավատացյալ հայերի համար մեկ է: Հայ ժողովրդի դարավոր պատմության պատմության ընթացքում, դեպքեր եղել են երբ փառասեր հոգևորականների կողմից փորձեր են արվել խախտելու այդ միասնությունը կամ անջատվելու Հայոց Եկեղեցու միությունից, բայց այդ փորձերը ժամանակի ընթացքում ձախողվել են, և միշտ հաղթող է եղել այն ճիշտ գիտակցությունը, թե Հայոց Եկեղեցու կենսական ուժը նրա միասնության մեջ է: Այսպես է եղել անցյալում, նույնն է լինելու անհրաժեշտաբար նաև ապագայում:



ՀԱՅՈՑ ԳԻՐՆ ՈՒ ԼԵԶՈՒՆ

Հայ ազգային ինքնության պահպանումը, սերունդներին հայեցի կրթելու դաստիարակելու, պատմական ակունքներին հաղորդակից դարձնելու ձգտումը մշտապես եղել և մնում է մեր ժողովրդի ազգային հոգեկերտվածքի կարևորագույն բաղկացուցիչը: Դարեր շարունակ օտար տիրապետողների լծի տակ գտնվելը, ազգային ինքնության կորստի մշտական սպառնալիքը, ձուլման վտանգը, հայոց գիտակցության մեջ առանձնահատուկ մոտեցում, վերաբերմունք է առաջ բերել՝ հայապահպան կարևորագույն ինստիտուտի՝ Հայ ազգային դպրոցի հանդեպ: Հայ ազգը պահպանվեց եւ գոյատևեց, չոչնչացավ շնորհիվ այն բանի, որ ունեցել է իր լեզուն ու գիրը, իր դպրոցը: Կան ազգային արժեքներ, որոնց կարելի է անդրադառնալ միայն մեծագույն ակնածանքով, մաքրամաքուր զգացողություններով, անափ սիրով ու նովիրումով: Նման արժեքներից է՝ մայրենի լեզուն: Հայ գիրը, որպես հայ ժողովրդի ստեղծագործ արարման միջոց և ազգային ինքնատիպության երաշխիք, մեծ ավանդ ունի մշակույթի համաշխարհային գանձարանում: Մայրենի լեզուն ազգային-պետական բարձրագույն արժեք է: Իր պատմության բոլոր ժամանակահատվածներում հայոց լեզուն հայակերտման ու ազգի համախմբման հետ միասին, ունել է և ունի հայապահպան առաքելություն: Հայտնի իրողություն է՝ մայրենիի կորուստը նախ կխարխլի ազգային ինքնագիտակցութեան հիմքերը, ապա եւ կհանգեցնի ուժացման: Դարեր ի վեր հայոց լեզուն եղել է հայ տեսակի կերտման, հայ ժողովուրդի մտածողության ու հոգեբանության ձևավորման ամենագորեղ միջոցը: «Մեր հայրերէն մեզի աւանդուած ժառանգութիւններէն ամենէն շքեղը, ամենէն իրականը մեր գեղեցիկ, հարուստ եւ մեծավայելուչ լեզուն է, պէտք է պահպանենք յուզումով, հրայրքով եւ խանդավառութեամբ: Ես վստահ եմ, որ կը պաշտպանենք» ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱ:

Ազգային, քաղաքական ու կրոնական միասնությունը ապահովելու նպատակով ստեղծվում է հայերեն այբուբենը: IV դարի վերջում մայրենի լեզվով գիր և գրականություն ունենալն ազգապահպան խնդիր էր դարձել, քանի որ հայերեն գրավոր լեզուն կենսական անհրաժեշտություն էր թե՛ պետության, թե՛ եկեղեցու և դրանով իսկ ներկա ու ապագա սերունդներին դաստիարակելու և կրթելու համար: Արշակունիների մոտալուտ անկման պայմաններում Հայ առաքելական եկեղեցին է դառնում միակ ազգային ամբողջական կառույցը, սակայն մայրենի լեզվով հոգևոր գրականության պակասը սպառնում էր հենց իր՝ Հայ առաքելական եկեղեցու անկախ գոյությանը: Մինչև հինգերորդ դարի սկիզբ հայերը չեն ունեցել իրենց Գիրը: Ձեռագրի համար օգտագործվում էին հունարեն, պարսկերեն և

ասորերեն լեզուները: Եվ դա բնական էր, մինչև Հայաստանը չմասնատվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: Հայ ժողովուրդը ըմբոստանում էր և չէր համակերպվում այդ իրավիճակի հետ, հույսը դնելով եկեղեցու վրա: Դարերով հայերը եղել են հեթանոս, իսկ Քրիստոնեության ընդունումից հետո սեփական Գրերն ունենալը կենսական կարիք չէր: Սակայն պառակտումից հետո սեփական գրերը ստեղծելու սուր անհրաժեշտություն առաջացավ: Գրերի ստեղծման գյուտն ամենից առաջ հուզում էր հոգևորականությանը: Եկեղեցուն ոչ այնքան հուզում էին հնագույն սովորույթների և ավանդների պահպանումն ու փոխանցումը սերունդներին, որքան հավատացյալների Աստծո գիրքը կարդալու և հասկանալու ոչ ունակ լինելը: Հայերեն լեզվով համապատասխան գրքերի բացակայության պատճառով եկեղեցական արարողությունները կատարվում էին ասորերեն: Ըստ ավանդույթի, ժողովրդի նշանավոր ներկայացուցիչները՝ Վռամշապուհ թագավորը, Մահակ Պարթև Կաթողիկոսը՝ Լուսավորչի տան վերջին շառավիղը, Մեսրոպ Մաշտոց վարդապետը և ուրիշներ, այն եզրակացությանը պիտի գային, որ ինքնուրույնությունն ու հոգևոր անկախությունն ապահովելու հաստատուն և անվրեպ միջոցը ո՛չ հունական, և ո՛չ էլ ասորական օրիենտացիային դիմելն է, այլ սեփական գիր ու գրականություն ստեղծելով երկուսից էլ անկախանալը՝ իհարկե, երկուսից էլ ընդունելով այն ամենը, ինչն օգտակար էր ու պիտանի ինքնուրույն կյանքի համար: Այսպիսով, մեծագույն կարիքն ստեղծեց հոգևոր ազատության լավագույն միջոցը՝ սեփական գիրն ու գրականությունը, և հայկական քրիստոնեությունն ու նրա հետ միասին հայ ժողովուրդը փրկվեց անխուսափելի կորստից: Մեզ մոտ էլ, ուրեմն, կատարվել է այն, ինչ ժամանակով միայն քիչ առաջ գոթերի համար իրագործել էր հայտնի Վուլֆիլա եպիսկոպոսը, և հետագայում սլավոնների համար՝ Կիրիլն ու Մեթոդիոսը: Մինչ Այբուբենի ստեղծմանն անցնելը, Մ. Մաշտոցն ուսումնասիրել է տարբեր ազգերի լեզուները, գրելու կարգը և տառերի ձևերը: Հայկական Այբուբենը Մաշտոցին տրվել է որպես աստվածային ընծա, աղոթքի ժամանակ նրան երևացել է քարերին տառեր գրող Աստծո ձեռքը: 405 թվականին, երկար տարագրությունից հետո նա ստեղծում է այբուբենը, որը համապատասխանում է ժամանակաշրջանի խոսակցական լեզվին և մինչ օրս մեծ փոփոխությունների չի ենթարկվել: Հայ գրերի գյուտից հետո, Մաշտոցը և իր երկու աշակերտները թարգմանում են Աստվածաշունչը հայերեն. հայաստաո առաջին նախադասությունն է. «ՃԱՆԱՉԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ և ԶԽՐԱՏ, ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ ՀԱՆՃԱՐՈՅ»: Վերադառնալուց անմիջապես հետո Մաշտոցը բուռն գործունեություն ծավալեց: Հիմնադրվեցին հայերեն լեզվով դասավանդող դպրոցներ, ուր ընդունեցին Հայաստանի տարբեր գավառներից եկած երիտասարդների: Մաշտոցը եւ Սահակ Մեծը

Թարգմանչական գործունեություն սկսեցին, ինչը պահանջում էր վիթխարի ջանքեր, քանի որ թարգմանում էին աստվածաբանության ու փիլիսոփայության հիմնարար գրքերը: Դրան զուգահեռ Մաշտոցը շարունակում է իր քարոզչական գործը երկրի տարբեր գավառներում: Եվ այսպես մինչև իր կյանքի վերջը Մաշտոցը մեծագույն կորովով շարունակում է իր գործունեությունը: Հայ գրերի գյուտը նոր դարաշրջան բացեց հայ մշակույթի պատմության մեջ: Հին հայերենն այնքան հարուստ էր, և մեսրոպյան այբուբենով ստեղծված թարգմանական և ինքնուրույն գրական ժառանգությունն՝ այնքան կատարյալ, որ V դարը համարվում է հայ մշակույթի պատմության «Ոսկե դար»: Հայաստանի լուսավորչական կյանքն ընթանում էր «Լաւ է կոյր աջօք, քան՝ կոյր մտօք» կարգախոսով: Ինչպես Լեոն (Առաքել Բաբաղանյան) է ներկայացնում, նրանք առաջինն էին, որ իրենց ձեռքով հայացված եկեղեցու համար հայերեն երգեր գրեցին ու երգեցին: Նրանց սկսածը շարունակեցին իրենց աշակերտները, այնպես որ Ոսկեդարը հանձնեց իր հաջորդ դարերին հոգևոր բանաստեղծությունների մի մեծ շարք: Այդ նույն ձեռագրերի հիշատակարաններից տեղեկանում ենք նաև, թե ինչպիսի ակնածությամբ ու գուգուրանքով էին մոտենում նրանց մեր նախնիները, ինչպես նրանք վտանգի ժամանակ իրենց պարտքն էին համարում ամենից առաջ հոգալ դրանց ապահով պահպանության մասին, իսկ երբ այդ ձեռագրերն այնուամենայնիվ ավարի էին առնվում, նրանց տերերի ու այդ տերերի ժառանգների գերագույն հոգսն էր դառնում ինչ գնով էլ լինի ազատել իրենց այդ «ամենաթանկագին գանձը» գերությունից և կրկին իր տեղը վերադարձնել: Թե հսկայական քանակությամբ ինչպիսի արժեքավոր ձեռագրեր են այս ճանապարհով կորել կամ ոչնչացել՝ գոհ դառնալով բարբարոսության, դա ինքնին հասկանալի է: Փաստ է նաև այն իրողությունը, որ հայը երբեմն կորցրեց իր պետականությունը, կորցրեց իր երկրի մեծ մասը, անթիվ գոհեր տվեց, նա ընկավ՝ բռնակալները հռոշտեցին, կեղեքեցին, փորձեցին բնաջնջել, բայց այդքան կորուստներից հետո նա պահեց, պահպանեց իր գիրն ու լեզուն, իր բնավորությունը, իր ստեղծագործ ոգին եւ այդ պատճառով էլ ապրեց մինչև իր կյանքի երջանիկ ժամանակները: Միշտ էլ մեր ժողովրդի համար գիրը եւ գիրքը սրբություն են եղել, հավատք եւ փրկություն, նաեւ համոզմունք այն բանի, որ նման մի ժողովուրդ որտեղ էլ որ լինի՝ չի կորչի: Հայ ժողովուրդը չի ապավինել զենք ու զրահին: Նրա զենքն ու զրահը գիրն է եղել եւ գիրքը: Մենք՝ Մաշտոցի երախտապարտ հետնորդներս, պարտավոր ենք վառ պահել նրա հիշատակը՝ չմոռանալով ո՛չ նրան եւ ո՛չ էլ նրա ստեղծած ազգապահպան Հայոց գրերը: Հայապահպանության մնայուն առանցքը և ող- նաշարը մայրենի լեզվի իմացությունն է, պահպանումն ու զարգացումը: Մայրենին սրբության

արբոց է՝ ազգային ինքնութեան եւ լինելիութեան վկայական: Եկէք ազգովին պահենք ու պահպանենք մեր լեզուն՝ մեր հայրենիքը:

«Լեռներ ու լեզու, ուրիշ էլ ինչ է ավանդել Հայկ նահապետը: Կորցնես լեռները՝ կկորչի և լեզուն, կորցնես լեզուն՝ այդ լեռներն աչքիդ հարթություններ կերևան: Ես կպահեմ մեր լեռների պէս հպարտ ու անկոտրում հայոց լեզուն, ես կպահեմ հայոց լեզվի պէս վեհ ու հպարտ մեր լեռները» Տիգրան Մեծ:



Ազգը կենդանի օրգանիզմ է, պատմաէթնոկական հասկացություն: Յուրաքանչյուր ազգի գոյապահպանման համար անհրաժեշտ են հետևյալ ազգային գործոնները՝ լեզու, մշակույթ, պատմական հիշողություն, ինքնագիտակցություն, բնավորություն, հոգեբանություն, հոգեկան կերտվածք, նկարագիր, զգացում՝ ազգասիրություն, հայրենասիրություն և հպարտություն, ոգի, ընտանիք, կրոն, ճաշակ, կենցաղ, էթնիկական ավանդույթներ, սովորույթներ և այլն: Ազգի, հայրենիքի, պետականության, լեզվի, մշակույթի և կրոնի գաղափարներն այն հիմնաքարերն են, որոնց վրա կառուցվում է ազգային գաղափարախոսության ամբողջ համակարգը: Անվիճելի է, որ պատմության փորձությունները հաղթահարելու, գոյապահպանման դարավոր կռիվից հաղթող դուրս գալու համար ազգը պետք է ունենա ուժեղ բնավորություն, հոգեկան կերտվածք, ազգային դիմագիծ: Յուրաքանչյուր էթնոս պատմության բեմահարթակ իջնելու պահից, որպես հիմնական խնդիր, ձեռնամուխ է լինում իր գոյապահպանման համակարգի ստեղծմանը: Մարդկային հասարակության արդի փուլում միայն այն ժողովուրդները կարող են գոյապահպանվել և իրականացնել իրենց ազգային իդեալը, որոնք ունեն պատմության փորձից բխող, գիտականորեն հիմնավորված ազգային գաղափարախոսություն: Այն ժողովուրդները, որոնց նկատմամբ պատմությունն անարդար է գտնվել, որոնք կորցրել են իրենց Հայրենիքը կամ Հայրենիքի մի մասը, և որպես կանոն, իրենց ազգային գաղափարախոսության հիմքում առաջին հերթին դնում են Հայրենիքի ազատագրության հարցը: Ահա՛ թե ինչու հայերի ազգային գաղափարախոսությունը պատմականորեն ստացել է Հայկական հարց, Հայ դատ և Պահանջատիրություն անվանումները, որը նշանակում է կորցրած Հայրենիքի ազատագրում: Իչպես արդեն վերը նշեցինք, հայ ժողովուրդն ունի մեկ Հայրենիք՝ Հայկական լեռնաշխարհը, որի տարբեր մասերը բռնազավթել են այլ պետություններ: Պետք է փաստենք, որ մեր հայրենիքը դարեր ի վեր հանդիսացել է քաղաքակրթությունների խաչմերուկ, տարբեր աղբյուրներում հիշատակվել որպես՝ Ավետյաց Երկիր: Տարբեր ժամանակաշրջաններում այստեղ հաստատվել են օտար պետություններ, քնակվել են օտար ցեղեր, ցեղախմբեր... Կարելի է ասել որ պատերազմներն այստեղ նաև Ավետյաց Երկրին տիրելու նպատակ են ունեցել, սակայն Հայոց աշխարհը հայի համար եղել և մնում է հավիտենական հայրենիք իսկ հայը եղել է դարեր շարունակ, կա ու կլինի: Հետևաաբար հայոց ազգային գաղափարախոսության հիմնական նպատակը Հայրենիքի կորցրած տարածքների ազատագրումն է: Հայ ժողովուրդը, եթե կամենում է գոյատևել, պարտավոր է՝ ազգի, հայրենիքի, մշակույթի և անկախ պետականության գաղափարները դարձնել ազգային

դաստիարակության առանցք: Այսպիսով, մեր պատմությունը և անցյալի դասերը հուշում են, որ հայ ժողովրդի հետագա ընթացքը դեպի ապագա, նրա անվտանգությունը և ապահովությունը պահանջում են այլևս չզիջել անգամ մեկ թիզ հող:

Նահանջելու տեղ այլևս չունենք և իրավունք չունենք որևէ տարածք կորցնելու, զիջելու ուրիշներին: Սա պետք է հասկանա յուրաքանչյուր հայ ու հասկացնի, բացատրի նաև ուրիշներին:

Ոչ ոք իրավունք չունի մեզ պարտադրելու կամ ստիպելու, որ հանձնենք բռնագրավված մեր հայրենիքի ազատագրված տարածքները: Եվ այսպես, Մաշտոցյան գրերը արդեն 1600 տարուց ավելի ծառայում են հայ ժողովրդին, Մեսրոպ Մաշտոցին էր վերապահված հայոց ինքնության հզոր դրսևորումներից մեկի՝ գրերի գյուտի առաքելությունը, իսկ հոգևոր առումով Հայաստանի վերամիավորումը: Մարդկության զարգացման պատմության մեջ գրերը խաղացել են չափազանց մեծ դեր: Նրանք իրենցից ներկայացնում են մի հզոր շարժիչ ուժ գիտության և մշակույթի զարգացման գործում: Գրերի շնորհիվ է, որ հնարավորություն ունենք օգտագործելու գիտելիքների այն մեծ պաշարը, որը մարդկությունը կուտակել է իր գործունեության բոլոր ոլորտներում: Հայոց գրերը հայ ժողովրդի համար դառնում են գոյատևման ,ազգային ինքնության, արժեհամակարգի պահպանման հզոր միջոց՝ բոլոր ժամանակներում: Անցնող ավելի քան 1700 տարիների ընթացքում քրիստոնեությունը մեր կյանքում իր շողերը սփռել է Հայոց եկեղեցու միջոցով, իր դրոշմն է դրել ոչ միայն մեր գրականության, հայկական Հայոց Եկեղեցին ազգային, ժողովրդական և չնայելով ի սփյուռս աշխարհի ցրված լինելուն՝ միասնական եկեղեցի է: Ազգային եկեղեցի է. դա նշանակում է, որ հայի ավատացյալ ժողովրդի համար ազգ և եկեղեցի հասկացությունները դարեր ի վեր միացած են եղել իրար հետ, և հայ ազգը, որպես ամբողջություն, հավատարիմ է մնացել իր առաքելահիմն ու լուսավորչահաստատ եկեղեցուն: Դարեր շարունակ Հայ եկեղեցին եղել է ազգային միասնության հոգևոր և գաղափարական գրավակներ: Ի մի բերելով վերոշարադրյալը՝ նկատում ենք, որ արժեհամակարգերի պատերազմում ուղղակի կոչնչացվեր հայ ազգը, եթե չլինեին ազգը՝ ազգ պահող հենասյուները՝ Հայրենիք, Լեզուն ու գիրը, Հավատքն ու մշակույթը... Որպես հավաքական, ուժեղ տեսակ՝ մենք պարտավոր ենք հաղթել արժեհամակարգերի, քաղաքակրթությունների հավիտենական պայքարում և ապահովենք մեզ համար առողջ միջավայրը, այն է՝ ԱՆԿԱԽ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, առանց որի անհնար է Հայապահպանությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մեսրոպ Մաշտոց «հողվածների ժողովածու» Երևան 1963թ.
2. Հայկ Խաչատրյան «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» Երևան 1967թ.
3. Ս.Ա. Սարգսյան «Մշակույթի Տեսություն և Հայ Մշակույթի Պատմություն»
4. Էդուարդ Դանիելյան «Հայոց պատմություն՝ Միջին դարերում» 7-րդ դասարանի դասագիրք Երևան 2019թ.
5. Հայկական Սովետական Հանրագիտարան
6. Վիքիպեդիա՝ Ազգային արժեքներ.
7. Վիքիդարան՝ Լեո «Ս. Մեսրոպ» 1904թ. Գուգլ գրքեր.